Մամուլի հաղորդագրություն

Երևան, Հուլիսի 21, 2025

Վեոլիա Հայաստան

Ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնում ենք, որ Վեոլիաթիմը օրեր շարունակ որոնողական աշխատանքներ է կատարել, ուսումնասիրել Փարաքարի ամբողջ ջրամատակարարման համակարգը, որպեսզի գտնի ջրանջատման պատճառը: Իսկ պատճառն այն էր, որ բնակիչները ցուցաբերել են ինքնագործունեություն և փակել դեպի թաղամասը սնող փականային հանգույցներից մեկը: Երեկ երեկոյան արդեն «Վեոլիա Ջուր» ընկերության մասնագետները մասամբ կարգավորել են խնդիրն ու վերականգնել թաղամասի մեծ մասի ջրամատակարարումը: Սակայն մինչ այժմ ընթանում են ցանցի կարգավորման աշխատանքներ՝ խնդիրը ամբողջությամբ վերացնելու համար:
Եվս մեկ անգամ հորդորում և խնդրում ենք մեր սպառողներին, խնդիրների դեպքում դիմել «Վեոլիա Ջուր» ընկերություն և չզբաղվել ինքնագործունեությամբ: Քանի որ այս անասելի տապի պայմաններում մի խումբ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով հազարավոր սպառողներ հայտնվում են անելանելի դրության մեջ: Իսկ մյուս կողմից էլ, երբ Վեոլիաթիմը աշխատում է գերլարված գրաֆիկով, հնարավոր ամեն բան անում ամռան այս օրերին թաղամասերի գրաֆիկով սահմանված ջրամատակարարումը ապահովելու համար, ստեղծվում են արհեստական խոչընդոտներ, էլ ավելի դժվարացնելով մեր աշխատանքը:

Հարգանքով՝
Հանրային կապերի ծառայություն

Կոնտակտներ

Կարինե Կարապետյան,
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ հանրային կապերի բաժին,
Հեռ.՝ + 374 11.300-186 (340)

Էլ. հասցե՝ karine1.karapetyan@veolia.com